ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0
010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/36470-2022

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Նարիբեկյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-392-07.10.2022-ԳԿ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի նոյեմբերի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1293 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քացախյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող
Հեռ. 010515686
Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-392-07.10.2022-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստորև ներկայացնում է իր դիտարկումներն ու առաջարկությունները:

1. Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել 6-րդ կետով, որի արդյունքում հեղինակազորումը կամ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, եթե դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումով անվավեր է ճանաչվել սույն օրենքի 46-րդ հոդվածի 9.1-ին մասով տրված լիցենզիան կամ դրա տրման մասին որոշումը:

Վերոնշյալի կապակցությամբ հայտնում ենք, որ «Լիցենզավորման մասին» օրենքի 37-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու միջոցով: Օրենքով նախատեսված հիմքերով լիցենզիայի գործողությունը համարվում է դադարեցված դատարանի համապատասխան վճիռն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից, եթե դատարանի վճռով ավելի ուշ ժամկետ նախատեսված չէ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք նախագիծը խմբագրել՝ «Լիցենզավորման մասին» օրենքին համապատասխանեցնելու նպատակով, մասնավորապես՝ «որոշումով» բառը փոխարինել «վճռով» բառով:

2. Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվում է օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել 7-րդ կետով, ըստ որի հեղինակազորումը կամ լիցենզիայի գործողությունը դադարեցվում է, եթե օրենքով սահմանվել են լիցենզիայի գործողությունը դադարեցնելու այլ դեպքեր:

Օրենքով լիցենզիայի գործողությունը դադարեցնելու այլ դեպքեր նախատեսելու վերաբերյալ կարգավորումները լրացուցիչ հիմնավորման կարիք ունեն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքի 58-րդ հոդվածով սպառիչ սահմանված են լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքերը:

3. Նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ կետով առաջարկվում է օրենքի 58-րդ հոդվածը լրացնել 7-րդ մասով, համաձայն որի, եթե հանրային մուլտիպլեքսի օգտագործման լիցենզիա տալու մասին Կարգավորող պետական մարմնի որոշումը՝ պատշաճ հիմնավորված և պատճառաբանված չլինելու հիմքերով, դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումով ճանաչվել է անվավեր, ապա ազատ սլոթով հեռարձակումը նույն պայմաններով, իրենց դիմումի հիման վրա, իրականացնում են մինչ այդ լիցենզավորված Հեռարձակողները՝ մինչև օրենքով սահմանված կարգով նոր լիցենզիայի մրցույթում հաղթող ճանաչվելը:

Տվյալ պարագայում հարկ ենք համարում նաև նշել, որ նախագծով առաջարկվող

կարգավորումը խնդրահարույց է իրավական որոշակիության սկզբունքի պահանջների պահպանման տեսանկյունից, մասնավորապես, նախագծով օգտագործվում է «մինչ այդ լիցենզավորված հեռարձակող» արտահայտությունը, մինչդեռ նախագծից պարզ չէ, թե որ հեռարձակողների մասին է խոսքը:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում անդրադառնալով որոշակիության սահմանադրական սկզբունքին արտահայտել է հետևյալ դիրքորոշումները.

«1) … օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (…) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (ՍԴՈ-630)».

«2) … Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի» (ՍԴՈ-1270)».

«3) … օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (ՍԴՈ-1176, ՍԴՈ-1449):

Միևնույն ժամանակ, ցանկանում ենք նշել, որ, եթե խոսքը վերաբերում է այն հեռարձակողներին, որոնց լիցենզիան դադարեցվել է դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա, ապա հարկ է նշել, որ նման կարգավորման նախատեսումը խնդրահարույց է «Լիցենզավորման մասին» օրենքի կարգավորումների տեսանկյունից: Մասնավորապես, վերոնշյալից ստացվում է, որ լիցենզավորման ենթակա գործունեությունն իրականացվելու է առանց համապատասխան լիցենզիայի:

Այնուամենայնիվ, առաջարկում ենք նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով՝ օրենքի 58-րդ հոդվածում լրացվող նոր 7-րդ մասը շարադրել հետևյալ կերպ.

«7. Եթե Հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա տալու մասին Կարգավորող պետական մարմնի որոշումը դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անվավեր, ապա այդ որոշման անվավեր ճանաչվելու պահին Հանրային մուլտիպլեքսի սլոթ օգտագործող Հեռարձակողը (Հեռարձակողները), իրենց դիմումի հիման վրա՝ նույն պայմաններով, շարունակում են իրականացնել հեռարձակում՝ մինչև օրենքով սահմանված կարգով սլոթի համար նոր լիցենզիայի տրամադրումը:»:

4. Նախագծում առկա են նաև օրենսդրական տեխնիկայի կանոնների խախտումներ, մասնավորապես՝

1) հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, այն է՝ օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը և «օրենք» բառը, իսկ օրենքի կրճատ

անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը՝ նախագծի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության» բառերն անհրաժեշտ է հանել.

2) նախագծի 2-րդ հոդվածի 2-րդ մասով առաջարկվում է օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել 7-րդ մասով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախագծի բովանդակությունից բխում է, որ լրացումն առաջարկվում է կատարել օրենքի 58-րդ հոդվածով, ինչպես նաև ինկորպորացման ժամանակ առաջացող հետագա խնդիրներից խուսափելու նպատակով առաջարկում ենք խմբագրել վերոնշյալ հոդվածը.

3) նախագծի 3-րդ հոդվածով նախատեսվում է, որ հեռարձակումը շարունակելու իրավունքը գործում է մինչև օրենքի ընդունումը՝ հանրային մուլտիպլեքսի օգտագործման լիցենզիա տրամադրելու կարգավորող պետական մարմնի որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումների վրա՝ տվյալ Հեռարձակողի դիմումի համաձայն: Բովանդակային առումով վերոնշյալ կարգավորումը պարզ չէ, ուստի անհրաժեշտ է այն վերանայել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1293 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ)
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Ավետ Պողոսյանին նշանակել Ազգային ժողովում «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-392-07.10.2022-ԳԿ-011/0) քննարկելիս կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

03.11.2022
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-392-07.10.2022-ԳԿ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքը (այսուհետեւ՝ «Օրենք») 46-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 9.1-րդ մասով.
«9.1. Սույն հոդվածի 8-րդ եւ 9-րդ մասերով սահմանված հիմքերով, Կարգավորող պետական մարմինը որոշում է մրցույթում հաղթող ճանաչված Հեռարձակողներին տալ Հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա:»:

Հոդված 2. Օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասը՝

1. լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ եւ 7-րդ կետերով.

«6) դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումով անվավեր է ճանաչվել սույն օրենքի 46-րդ հոդվածի 9.1-րդ մասով տրված լիցենզիան կամ դրա տրման մասին որոշումը.

7) օրենքով սահմանվել է լիցենզիայի գործողությունը դադարեցնելու այլ դեպքեր:»

2. լրացնել հետեւյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Եթե Հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա տալու մասին Կարգավորող պետական մարմնի որոշումը՝ պատշաճ հիմնավորված եւ պատճառաբանված չլինելու հիմքերով, դատարանի օրինակ ուժի մեջ մտած որոշումով ճանաչվել է անվավեր, ապա ազատ սլոթով հեռարձակումը նույն պայմաններով, իրենց դիմումի հիման վրա, իրականացնում են մինչ այդ լիցենզավորված Հեռարձակողները՝ մինչեւ օրենքով սահմանված կարգով նոր լիցենզիայի մրցույթում հաղթող ճանաչվելը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:
Սույն օրենքի 2-րդ հոդվածով սահմանված՝ 58-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված հեռարձակումը շարունակելու իրավունքը գործում է մինչեւ օրենքի ընդունումը՝ Հանրային մուլտիպլեքսի օգտագործման լիցենզիա տրամադրելու կարգավորող պետական մարմնի որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումների վրա՝ տվյալ Հեռարձակողի դիմումի առկայության դեպքում:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Անհրաժեշտությունը.

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքում լրացումներ կատարելու կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Հանրային սլոթի օգտագործման լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշումը դիտարկելու եւ դրա արդյունքում Հեռարձակողների իրավունքները եւ տնտեսվարման ռիսկերը նվազեցնելու հիմքերը սահմանելով:

2. Խնդիրները եւ կարգավորման նպատակը.

Ներկայումս «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 46-րդ հոդվածը սահմանել է լիզենզավորման մրցույթի նախապայմանները, սակայն հստակ չէ, որ Կարգավորող պետական մարմինը՝ մրցույթի արդյունքում «հաղթող է ճանաչում Հեռարձակող կազմակերպությանը եւ որոշում է կայացնում Լիցենզիա տրամադրելու վերաբերյալ»: Այս ամենը ենթադրվում է օրենքի տրամաբանությունից: Նշված դրույթի հստակ սահմանումը անհրաժեշտություն է դառնում, երբ տարբեր շահառումներ իրենց գործունեության ընթացքում անհրաժեշտություն են ունենում կոնկրետ կոնկրետ հղումեր կատարել կարգավորող նորմին:
Գործող օրենքում, որպես լիցենզիայի գործողությունը դադարեցնելու հիմք չի դիտարկվել դատական կարգով բողոքարկումների եւ հօգուտ դատարանի որոշում ունենալու դեպքերը: Օրենքի նախագծով՝ 58-րդ հոդվածում սահմանվել է այդ դեպքը, ինչպես նաեւ նախատեսվել, որ եթե Հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզիա տալու մասին Կարգավորող պետական մարմնի որոշումը՝ պատշաճ հիմնավորված եւ պատճառաբանված չլինելու հիմքերով, դատարանի օրինակ ուժի մեջ մտած որոշումով ճանաչվել է անվավեր, ապա ազատ սլոթիով հեռարձակումը նույն պայմաններով, իրենց դիմումի հիման վրա, իրականացնում են մինչ այդ լիցենզավորված Հեռարձակողները՝ մինչեւ օրենքով սահմանված կարգով նոր լիցենզիայի մրցույթում հաղթող ճանաչվելը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայումս առակ է նախադեպ, երբ մեկ հեռարձակողի բողոքի հիման վրա դատարանը անվավեր է ճանաչել Կարգավորող պետական մարմնի՝ Հեռարձակողներին լիցենզիա տալու մասին որոշումը եւ հինգ հեռուստաընկերություն չեն կարող օգտվել Հաղթողի իրենց իրավունքից ու իրականացնել հեռարձակումն, ապա նախագծով սահմանվել է օրենքի հետադարձ ուժի կիրառման սկզբունքը:

3. Ակնկալվող արդյունքը.

Օրենքի նախագիծը ընդունելու արդյունքում հնարավոր կլինի պաշտպանել հեռուստալսարանի տեղեկացված լինելու իրավունքը, ինչպես նաեւ կնվազեցնի տնտեսվարողների գործունեության ֆինանսական կորուստները՝ մինչեւ նոր մրցույթի կայացումը: